

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2021-5-2-Ա

ք. Երևան

25.05.2021թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2021 թվականի մայիսի 25-ի նիստում քննարկեց 2021 թվականի ապրիլի 13-ին արտոնագրային հավատարմատար Ալեքսանդր Նահապետյանի կողմից ներկայացված՝ COMPANY "WORLD OF TASTE" Limited Liability Company ընկերության (hwy. Entuziastov, 21, bldg. 2, r. 505 RU-111024 Moscow, RU) «ЧЕРНЫЙ ПРИНЦ» (IR1470847) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն, որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը չի կարող գրանցվել որպես ապրանքային նշան Հայաստանի Հանրապետությունում միջազգային գրանցման հիման վրա պահպանվող «PRINCE» , «CHOCO PRINCE», «ПРИНЦ» (KRAFT FOODS BELGIUM INTELLECTUAL PROPERTY BVBA De Beukelaer - Pareinlaan 1 B-2200 HERENTALS (BE) IR 684577, 678793, 747129, 809122) բառային և համակցված ապրանքային նշանների առկայության պատճառով: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 119-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի, 120-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի և 124-րդ կետի համաձայն բառային ապրանքային նշանների նման են համարվում բառային ապրանքային նշանները, որոնք ունեն ձայնային և իմաստային նմանություն, որոնց նմանությունը որոշվել է ձայնային հատկանիշներով և համակցված ապրանքային նշանները, որոնց մեջ ընդգրկված հիմնական ընկալման բառային տարրերը շփոթելու աստիճանի նման են հայտարկված նշանի հիմնական ընկալման բառային տարրին, այդ թվում՝ նաև այն

դեպքերում, երբ այդ բառային տարրերը գրված են տարբեր լեզուներով: Տվյալ դեպքում համեմատվող նշաններն ունեն ձայնային և իմաստային նմանություն, այն է՝ համեմատվող նշանները բաղկացած են միևնույն իմաստ ունեցող «ПРИНЦ» և «PRINCE» տարրերից, որոնց հայերեն թարգմանությունն է «արքայազն», հետևաբար տեսնելով դրանցից մեկը, միջին սպառողի մոտ կարող է պատկերացում առաջանալ մտապատկերված մեկ այլ նշանի մասին, որի հետ ինքն արդեն առնչվել է:

Կոլեգիայի նախագահը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանը գրանցելու մասին, քանի որ հայտատուն ներկայացրել է նամակ համաձայնագիր հակադրվող ապրանքային նշանների իրավատիրոջ կողմից:

Բողոքարկողը համաձայն էր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ ներկայացված նամակ համաձայնագրի առկայության դեպքում հայտարկված ապրանքային նշանը ենթակա է գրանցման:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Ալեքսանդր Նահապետյանի կողմից ներկայացված բողոքն ամբողջությամբ բավարարել, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և «ЧЕРНИЙ ПРИНЦ» (IR1470847) ապրանքային նշանը գրանցել:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ

ՎԱՐՈՍ ՍԻՄՈՆՅԱՆ